Տոկոսադրույքի հաշվարկման կարգը

Վարկի օգտագործման համար վարկառուն բանկին վճարում է տոկոս, որի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ, վարկի տրամադրման օրվանից՝ փաստացի օգտագործված օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր: Առանձին ծրագրերի շրջանակներում վարկավորման դեպքում տարին կարող է ընդունվել 360 օր:

- Տոկոսագումարները վճարվում են վարկային պայմանագրում նշված ժամկետներում:
- Տոկոսների վճարման պարբերականությունը սահմանավում է վարկային պայմանագրի կամ մարման գրաֆիկի համաձայն:
- Եթե վարկի կամ հաշվարկված տոկոսների մարման օրը համընկնում է հանգստյան օրերի հետ, վճարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրերին՝ հանգստյան օրերի համար չհաշվարկելով տույժ:

Վարկային պարտավորության մարումները

- Վարկերը մարվում են այն ժամկետներում, որոնք նշված են վարկային պայմանագրում,
- Վարկերը մարվում են այն արժույթով, որով ձևակերպվել են,
- Արտարժույթային վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա,
- Արտարժույթի փոխարժեքի փոփոխության դեպքում արտարժույթով տրամադրած վարկերի գծով փոխարժեքի փոփոխության ազդեցության ռիսկը կրում է վարկառուն:

Վարկային պարտավորության մարումները կատարվում են հաշվապահության կողմից հետևյալ հերթականությամբ.

- Դատական ծախսերի գումարը (առկայության դեպքում),
- Գրավի իրացման ծախսերը (առկայության դեպքում),
- Հաշվարկված տույժերը,
- Վարկի սպասարկման և այլ վճարներ (առկայության դեպում),
- Հաշվարկված տոկոսները,
- Վարկի մայր գումարը:

Վարկային պարտավորություններ ժամկետից շուտ կատարման դեպքում հաշվարկվում է տուգանք.

- Առանց Բանկի գրավոր համաձայնության յուրաքանչյուր ամսվա ընթացքում տվյալ ամսվա առաջին օրվա դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի 20%-ից (որում չի ներառվում տվյալ ամսում մարման ժամանակացույցով նախատեսվող վարկի մասի մարումը) ավել գումար վաղաժամկետ մարելու դեպքում՝ հաշվարկվում է տուգանք այդ գումարի 5%-ի չափով:
- Առանց Բանկի գրավոր համաձայնության վարկային գծի գործողության ժամկետում վարկային գծի վաղաժամկետ փակման դեպքում՝ կիրառվում է տուգանք վարկային գծի սկզբնական սահմանաչափի 5%-ի չափո

Վաղաժամկետ մարման տուգանք չի կիրառվում <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի կողմից վարկի վերաֆինանսավորման արդյունքում Վարկառուի գործող վարկերի վաղաժամկետ մարման, ինչպես նաև <<Ակնթարթ>>, Հաշվարկային հաշվի շրջանառության հիման վրա տրամադրվող (գրավով չապահովված), Դրամական միջոցների գրավադրմամբ ապահովված, Արտահանման ֆինանսավորման և <<Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով

ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրի>> շրջանակներում տրամադրվող վարկերի դեպքում:

Ուշադրություն.
Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքռա):

Ուշադրություն.
Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.
Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները